10297

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 17 » 08 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0150-21

Ձեռնարկողը՝ *« ԳԵՎՈՐԳՅԱՆՆԵՐ » ՍՊԸ*
Գեղարքունիքի մարզ, Գեղհովիտ 5 փ. 7 նրբ. փուն 3

Գործունեությունը՝ *Գեղարքունիքի մարզի Մթնաձորի բազալտի երևակման տեղամասում 2021-2022թ.թ. իրականացվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ*
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Մթնաձորի բազալտի երևակման տեղամաս

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0150-21

< 17 **>** 08 **2021թ.**

Գեղարքունիքի մարզի Մթնաձորի բազալտի երևակման տեղամասում 2021-2022թ.թ. իրականացվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԳԵՎՈՐԳՅԱՆՆԵՐ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ, Ծրագիր /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Գեղհովիտ 5 փ. 7 նրբ. տուն 3

Ներածական մաս. Գեղարքունիքի մարզի Մթնաձորի բազալտների երևակումը վարչական տեսակետից գտնվում է Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղի վարչական տարածքում, Մադինա և Լեռնակերտ գյուղերից դեպի հարավ-արևելք համապատասխանաբար 5.0կմ և 4.0կմ հեռավորությամբ: Հայցվող տարածքն ունի 6.0 հա մակերես:
Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը ներկայացված է քարքարոտ, գյուղատնտեսական նպատակների համար ոչ պիտանի հողերով:
Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:
Նկարագրական մաս. Երևակման հետազոտման մեթոդիկան ընտրելիս հաշվի են առնվել օգտակար հանածոյի մարմնի ձևաբանությունը, դիրքը, տեղամասի երկրաբանական կառուցվածքը, երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները, տեղամասի չափերը, ռելիեֆի ձևն ու մերկացվածության աստիճանը:
Մթնաձորի բազալտի երևակումում երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են «ԳԵՎՈՐԳՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի նախաձեռնությամբ և իր ֆինանսական միջոցների հաշվին դրանք որպես երեսապատման նյութ (ըստ 9479-98 ԳՈՍՏ-ի) և

շինարարական խճի ու ավազի (ըստ ՀՍՏ ԳՕՍՏ 8267-95 և ՀՍՏ ԳՕՍՏ 8736-2014) հումք գնահատելու, պաշարների հաշվարկման և հանքավայրի հետագա շահագործման համար:

Ուսումնասիրվող երևակման ծայրակետային կոորդինատներն են՝ ARM WGS-84 կոորդինային համակարգով.

Մթնածորի բազալտի երևակման 1-ին տեղամաս

1. 4434288 8523775
2. 4434505 8523648
3. 4434569 8523741
4. 4434330 8523883

Մթնածորի բազալտի երևակման 2-րդ տեղամաս

1. 4434811 8525058
2. 4435088 8525073
3. 4435158 8525079
4. 4435332 8525105
5. 4435333 8525151
6. 4434819 8525118

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 132-112մմ տրամագծով: Նախատեսվում է հորատել 25 մետր խորության 14 հորատանցքեր 350 մետր ընդհանուր ծավալով, հորատահանուկի նվազագույն ելքը՝80%:

Նախատեսվում է 1-ին խմբի 14 հորատանցքերի հորատում ՈՒԳԲ 1ԿՍ տիպի ինքնագնաց հաստոցով: Նախատեսվում է հորատող հաստոցի 14 տեղակայում և տեղահանում:

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման համար նախատեսվում է երևակման սահմաններում փորձնական բացահանքի անցում՝ 20x3x2.5=150խմ ծավալով, չհողմնահարված, թարմ ապարներից: Վերջիններից կկատարվի փորձնական հանույթ պիտանի բլոկների ելքի որոշման համար: Այս աշխատանքները կկատարվեն մեխանիկական հարատասեպային եղանակով, օգտագործելով էքսկավատոր, VIII կարգի ամրության ապարներում: Աշխատանքների ընթացքում կատարված ծախսերի և վերջնարտադրանքի քանակի մասին ստացված տվյալները կդրվեն հանքավայրի արդյունաբերական գնահատման հիմքում:

Երկրաբանահետախուզական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ հետախուզական փորվածքների և հորատանցքերի անցման ընթացքում:

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար դաշտային աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել ռադիոմետրիական չափումներ հանքավայրի ամբողջ տարածքում СРП 6801 ռադիոմետրիական չափիչ սարքի միջոցով:

Բազալտները նախատեսվում է ուսումնասիրել որպես երեսապատման նյութ և շինարարական խճի և ավազի արտադրման հումք: Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, բացահանքից և բնական մերկացումներից: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է. հորատանցքերից առաջինը կնմուշարկվի անընդհատ տիրույթներով, մնացածը ընդհատվող:

Հորատահանուկի նմուշների սեկցիայի երկարությունը մինչև 5մ: Հանուկային նմուշների ընդհանուր քանակը կկազմի 61 նմուշ (308մ). մենաքարերի վերցնում փորձնական բացահանքից 2 հատ (20x20x20սմ չափսերի). քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 2 նմուշ, իսկ քարաբանական կազմի ուսումնասիրման նպատակով կվերցվի 2 նմուշ: Նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ, օգտակար հանածոյի ռադիացիոն հիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Բազալտների քիմիական կազմը կորոշվի ըստ 2 նմուշների անալիզի. Ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 63 նմուշներով (հորատահանուկ 61 նմուշ, մենակաքար 2 նմուշ): Նմուշներից 20-ը կենթարկվեն փորձարկումների լրիվ ծրագրով, իսկ 41-ը կրճատ: Քարաբանական և միներալոգական ուսումնասիրությունները կկատարվեն 2 հղկուկների միջոցով: Հաշվի առնելով ուսումնասիրվող տարածքի ռելիեֆը, ինչպես նաև արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները, նախագծով ճանապարհների շինարարություն չի նախատեսվում, իսկ հորատման աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 14 հորատման հրապարակների շինարարություն, յուրաքանչյուր հորատման հարթակի մակերեսը կազմում է 24քմ, որի ընդհանուր ծավալը կազմում է 168 խոր.մ. /հաշվի առնելով հողաբուսաշերտի հզորությունը 0,5մ/ (14 x 24 x 0.5 = 168խմ), իսկ փորձնական բացահանքի տարածքը՝ 50 x 0,5 = 25խմ, /փորձնական բացահանքի երկարությունը 20մ, իսկ լայնությունը՝ 2.5մ/: Ընդամենը կկազմի 193խմ:

Տեղամասում նախատեսվում է անցնել նաև 1 բացահանք 20գծ.մ ծավալով: Բացահանքի առաջխաղացումը կկազմի 2.5մ, իսկ բարձրությունը 5.0մ: Այսպիսով, բացահանքի անցումը թափոններ չի առաջացնի, քանի որ դրանք կարճաժամկետ կուտակվում են անմիջապես փորվածքի հարևանությամբ, այնուհետև օգտագործվում են ռեկուլտիվացիոն աշխատանքների համար:

Նախատեսված է նախապես հանել, կտրել հողաբուսաշերտը, ապա այն օգտագործել հորատման հրապարակների և փորձնական բացահանքի վերականգնման համար:

Ռեկուլտիվացիոն աշխատանքներն իրականացվելու են ձեռքով, որի համար նախատեսված է՝ 193խմ x 1000 = 193000 ՀՀ դրամ:

Նախատեսվում է կատարել 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ 6.0 հա մակերեսով տարածքում, բոլոր հետախուզական փորվածքների և երկրաբանական մերկացումների գործիքային տեղադրմամբ տոպո հիմքի վրա:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենալու, քանի որ հետախուզական աշխատանքների տեխնոլոգիայով ջրի արտահոսքեր չեն նախատեսվում:

Անմիջապես երևակման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած բույսեր և կենդանիներ ինչպես նաև դրանց աճելավայրեր կամ ապրելավայրեր չեն արձանագրվել, տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- նավթամթերքների պահում աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի թափքում / անհրաժեշտ քանակի նավթամթերք բարձվելու է բեռնատար մեքենայի թափքում և ուղարկվելու է աշխատանքների տարածք, սպասարկող բեռնատար մեքենայի լիցքավորման համար/:
-հորատման թագագլխիկների հավաքում որպես մետաղական ջարդոն, աշխատանքների ավարտից հետո հանձնում մասնագիտացված կազմակերպություններին վերամշակման համար,
- կենցաղային աղբի հավաքում հատուկ պոլիէթիլենային տոպրակների մեջ, աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայով տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր,
- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- հորատումը կատարվելու է «թաց հորատման» մեթոդով, ինչը կբացառի փոշեգոյացումը հորատման ժամանակ,
- փոշենստեցման նպատակով տեղամասին մոտեցնող ճանապարհի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- տեխնիկական նպատակներով անհրաժեշտ ջուրը տեղափոխվելու է մոտակա բնակավայրից՝ պայմանագրային հիմունքներով,
- նախատեսվում է աշխատանքների կատարման տեղամասերը ցանկապատել ելնելով անվտանգության նկատառումներից,
- կեղտաջրերի հավաքումը կկատարվի դաշտային հորատիպ զուգարանում, որը աշխատանքների ավարտից հետո դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով, դատարկված փոսը լցվելու է քարերով,
- խախտված տարածքների ռեկուլտիվացիա, ինչի նպատակով հորատման հարթակների և փորձնական բացահանքի անցումից առաջ ճիմապատ հողաբուսական շերտը հանվելու է, կուտակվելու է մոտակայքում, պարբերաբար ջրվելու է, իսկ աշխատանքների ավարտից հետո հետ է փռվելու:

Պատճառաբանական մաս. Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ինչպես նաև առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Գեղարքունիքի մարզպետարանը:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Աշխատանքների ընթացքում ղեկավարվել առողջապահության նախարարի 2012թ.սեպտեմբերի 19-ի N15-Ն նորմերի պահանջներով:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԳԵՎՈՐԳՅԱՆՆԵՐ» ՍՊԸ կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Մթնաձորի բազալտի երևակման տեղամասում 2021-2022թ.թ. իրականացվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Վ. Հարությունյան